ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/36

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատու Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Գ. Մուրադյանի,
Բողոքաբեր «ԻԿՕ Մաշիների» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հովակիմյանի,
Երրորդ անձ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Կ. Տոնոյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ԻԿՕ Մաշիների» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 23.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի

կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Բողոքներ քննող անձի 24.05.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 31.05.2019թ., 10.06.2019թ. և 17.06.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 17.06.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.06.2019թ.-ին:

2. <u>«ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ էքսկավատոր-ամբարձիչի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել ինչպես «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/, այնպես էլ «ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ն(այսուհետ նաև՝ Ընկերություն):

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել են հետևյալ պարամետրերը. «Ամբողջությամբ նոր (2018թ. և բարձր արտադրության) անվավոր էքսկավատոր-ամբարձիչ համալրված արագմիացման սարքով, հիդրոմուրճով և բարձր ճնշման երկհոսքային հիդրավլիկ գծերով, փոքր շերեփով (լայնք/ծավալ ոչ պակաս 300/0,075), հեռահար մոնիթորինգի համակարգով, լուսային փոսորակով: Շահագործման քաշը՝ ոչ պակաս 8100կգ, շարժիչի նվազագույն հզորությունը ձ.ու./կվտ՝ 93/68,5, էքսկավատորի շերեփի ծավալը՝ ոչ պակաս 0,24մ3, փորման առավելագույն խորությունը՝ ոչ պակաս 5,6մ, առջևի շերեփի բեռնափարողությունը՝ ոչ պակաս 3500կգ, առջևի շերեփի ծավալը՝ ոչ պակաս 1մ3, առջևի շերեփի բեռնաթափման առավելագույն բարձրությունը՝ ոչ պակաս 2,8մ, էքսկավատորի շերեփի բեռնաթափման առավելագույն բարձրությունը՝ ոչ պակաս 4,6մ, տրանսմիսիան՝ 4x4: Երաշխիքը՝ 365 օրացուցային օր առանց մոտոժամերի սահմանափակման»:

Ընթացակարգի առաջին տեղ/հաղթող մասնակից ճանաչված «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից ներկայացված տեխնիկական-բնութագրով ներկայացված պարամետրերում առկա են անհամապատասխա-նություններ, մասնավորապես՝

Մրցույթի պահանջի/չափանիշի նկարագրությունը		<<ՌԱՖ-ՕՋԱԽ>> ՍՊԸ-ի /կոնսորցիում <<Հ.Ա.Ն.Ս-ՖՈՒԴ>> ՍՊԸ կողմից մրցույթով հայտավորված տեխնիկական բնութագրի արժեքը	Մասնակցի կողմից նշված ООО "Дорэлектромаш" արտադրողի պաշտոնական կայքում նշված ДЭМ 310 մոդելի էքսկավատոր-ամբարձիչի տեխնիկական չափանիշները	Բացասական տարբերությունը
Շահագործման քաշը՝ **ոչ պակաս քան**	8100կգ	8100 կգ	7300կգ (ստանդարտ արմունկով) 7700կգ (տելեսկոպիկ արմունկով)	- 800կգ (ստանդարտ արմունկով) - 400կգ (տելեսկոպիկ արմունկով)
Փորման առավելագույն խորությունը՝ **ոչ պակաս քան**	5.6մ	5.6մ	4.32մ (ստանդարտ արմունկով) 5.52մ (տելեսկոպիկ արմունկով)	- 1.28մ (ստանդարտ արմունկով) - 0.08մ (տելեսկոպիկ արմունկով)
Էքսկավատորի շերեփի բեռնաթափման առավելագույն բարձրությունը՝ **ոչ պակաս քան**	4.6մ	4.6մ	Նշված չէ արտադրողի	-

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ «Շահագործման քաշ» չափանիշը 400կգ.-ից 800կգ. Պակաս լինելը՝ էապես ազդում է ոչ միայն ապրանքի շահագործման և արտադրողականության վրա, այլև էապես ազդում է ապրանքի գնի վրա, որը հավասար պայմաններ չի ստեղծում մրցույթի մասնակիցների համար:

Վերոնշված անհամապատասխանությունների վերաբերյալ 20.05.2019թ. նամակ ենք ուղարկել նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որով գնահատող հանձնաժողովին խնդրել էինք արտադրող ընկերությունից կատարել ճշտումներ կամ ստանալ պարզաբանումներ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից 2-րդ փուլով ներկայացված փաստաթղթերը գնահատվեցին բավարար և արդյունքում www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 21.05.2019թ. հրապարակվել է «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասիհամաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գտնում ենք, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրությանպահանջների խախտում, մասնավորապես՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից 2-րդ փուլով ներկայացված փաստաթղթերը բավարար գնահատելով գնահատող հանձնաժողովը ստեղծել է մասնակիցների միջև ոչ հավասար պայմաններ և արդյունքում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից ներկայացված տեխնիկական-բնութագրով ապրանքը կարող էր մատակարարել նաև մյուս մասնակիցները՝ ավելի մատճելի գնով: Փաստացիորեն, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից ներկայացված տեխնիկական-բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական-բնութագրին, ինչի պայմաններում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ հայտը չէր կարող գնահատվել հրավերի պահանջներին բավարարող, որն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջների խախտմանը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ վիճարկվող գնանշման հարցման հրավերի տեխնիկական-բնութագրի և «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից ներկայացված տեխնիկական-բնութագրով ապրանքի մեջ առկա են էական տարբերություններ, և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի կողմից ներկայացված 2 փուլով նախատեսված փաստաթղթերը պետք է գնահատվեին անբավարար:

Ավելին, մեր Ընկերության կողմից կատարվել են ուսումնասիրություններ՝ արտադրող կազմակերպության պաշտոնական կայքում /կցվում է/, որտեղ հստակ նկարագրված է «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից առաջարկվող «ДЭМ 310» մոդելի տեխնիկական-բնութագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.05.2019թ. գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ հնարավորություն տալով «ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ի կողմից 23.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Պատվիրատուի ներկայացուցիչը մասնակցելով 17.06.2019թ. նշանակված նիստին, հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի որոշումները համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Վերջինիցս պահանջվել է որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ հրավերով սահմանված տեխնիկական չափորոշիչների և «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական չափորոշիչների միջև որևէ տարբերություն չկա:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կողմից 29.04.2019թ. էքսկավատոր-ամբարձիչի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով նախատեսված, պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ էքսկավատոր-ամբարձիչը, որի համար սահմանվել են հետևյալ բնութագրերը.

1. Ամբողջությամբ նոր (2018թ և բարձր արտադրության) անվավոր էքսկավատոր-ամբարձիչ համալրված արագ միացման սարքով, հիդրոմուրճով և բարձր ճնշման երկհոսքային հիդրավլիկ գծերով, փոքր շերեփով (լայնք/ծավալ ոչ պակաս 300/0,075), հեռահար մոնիթորինգի համակարգով, լուսային փոսորակով;

2. Շահագործման քաշը՝ ոչ պակաս 8100կգ, շարժիչի նվազագույն հզորությունը ձ.ու./կվտ՝ 93/68,5, էքսկավատորի շերեփի ծավալը՝ ոչ պակաս 0,24մ3, փորման առավելագույն խորությունը՝ ոչ պակաս 5,6մ, առջևի շերեփի բեռնատարողությունը՝ ոչ պակաս 3500կգ, առջևի շերեփի ծավալը՝ ոչ պակաս 1մ3, առջևի շերեփի բեռնաթափման առավելագույն բարձրությունը՝ ոչ պակաս 2,8մ, էքսկավատորի շերեփի բեռնաթափման առավելագույն բարձրությունը՝ ոչ պակաս 4,6մ, տրանսմիսիան՝ 4x4:

3. Երաշխիքը՝ 365 օրացուցային օր առանց մոտոժամերի սահմանափակման:

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ և «ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 08.05.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ «ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ն՝ 3-րդ տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 20.05.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակցի կողմից տրամադրված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, որի արդյուքնում գնահատող հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակից հայտարարել «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/:

Պատվիրատուի կողմից 21.05.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից Բողոքներ քննող անձին է ներկայացվել «Դորէլեկտրոմաշ» ՍՊԸ-ի կողմից 10.05.2019թ. տրված էքսկավատոր-ամբարձիչ ԴԷՄ310-01 ապրանքի տեխնիկական բնութագրերը, որի համաձայն՝ վերը նշված ապրանքը ամբողջությամբ համապատասխանում է Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին, բացառությամբ ապրանքի համար նախատեսված երաշխիքային ժամկետներին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ԻԿՕ Մաշիների» ՍՊԸ-ի կողմից 23.05.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական

բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային,

թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի կողմից 29.04.2019թ. էքսկավատոր-ամբարձիչի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով Ընթացակարգի հրավերով համաձայն գնման առարկա է հանդիսացել 1 հատ էքսկավատոր-ամբարձիչը, որի համար սահմանվել են մի շարք տեխնիկական պայմաններ, այդ թվում նաև սահմանվել է, որ ապրանքի երաշխիքը պետք է լինի 365 օրացուցային օր՝ առանց մոտոժամերի սահմանափակման:

Ընթացակարգի արդյուքնում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող, իսկ այնուհետև՝ ընտրված մասնակից:

«Դորէլեկտրոմաշ» ՍՊԸ-ի կողմից 10.05.2019թ. տրված էքսկավատոր-ամբարձիչ ԴԷՄ310-01 ապրանքի տեխնիկական բնութագրերի համաձայն վերը նշված ապրանքի համար նախատեսված երաշխիքային ժամկետը 12 ամիս է, ոչ ավելի քան 2000 մոտոժամ շահագործման պահից սկսված, բայց ոչ ավելի, քան 18 ամիս վաճառքի պահից, իսկ Ընթացակարգի հրավերով նախատեսվել է 365 օրացուցային օր՝ առանց մոտոժամերի սահմանափակման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հրավերով նախատեսվել է, որ ապրանքների գնման դեպքում

մասնակիցն առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը:

Սակայն տվյալ դեպքում Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագերին՝ առկա է երաշխիքային ժամկետի անհամապատասխանություն, ինչի պայմաններում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելը հանգեցնում է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը, որպիսի պայմաններում «ԻԿՕ Մաշիների» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԻԿՕ Մաշիների» ՍՊԸ-ի կողմից 23.05.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից էքսկավատոր-ամբարձիչի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեության պայմանագիր «Հ.Ա.Ն.Ս-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ/ ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**